Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՇՁԲ-21/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.10.2021թ. ժամը 16:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Ս. Խանվելյան – ՀՀ ՖՆ պետական պարտքի կառավարման վարչության գործառնական բաժնի պետ,

Գ. Վարդապետյան – ՀՀ ՖՆ պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ,

Հ. Ղազարյան - ֆինանսների նախարարության ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության գնումների բաժնի պետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Համբարձումյան – ՀՀ ՖՆ պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամ

Մ. Մելիքյան – ՀՀ ՖՆ պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

1. **Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդ աշխատանքային օրը ժամը 16:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՇՁԲ-21/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ

մասնակիցը՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«ՎԱՌՄ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00488698, հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 48, 43, հեռ.՝ +37491192900

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. <u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին</u>

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ մասնակցի կողմից ներկայացված հավելված 1-ում լրացված չէ չափաբաժնի համարը, որին մասնակցելու համար դիմում է ներկայացրել մասնակիցը, իսկ հավելված 1.2-ի 2.10 բաժնի «ա» կետում բացակայում է նշումը՝ տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. <u>Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը</u>

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՇՁԲ-21/2» ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկված գները ներկայացվում են հավելված 1-ում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

<u>5. Հանձնաժողովի կայացրած որոշումները</u>

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «ՎԱՌՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել առկա անհամապատասխանությունները՝ ներկայացնելով շտկված հավելված 1-ը և 1.2-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՇՁԲ-21/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի հոկտեմբերի 21-ին ժամը 11:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Ս. Խանվելյան

_____ Գ. Վարդապետյան

_____ Հ. Ղազարյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան

Հավելված 1

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)					
		«ՎԱՌՄ» ՍՊԸ					
		Արժեք		ԱԱՀ		Ընդհանուր գին	
		Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ
1	**ՀՀ Պետական պարտքը» տարեկան հաշվետվության տպագրում** /2022թ. համար պլանավորված գին՝ 850 000 ՀՀ դրամ/	700 000	700 000	140 000	140 000	840 000	840 000